



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2015թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում (վերլուծություն)

2015 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 130358 գործարք, որոնց քանակը, 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 16.3 %-ով:

2015 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2015 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2015 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին, անշարժ գույքի նկատմամբ իրականացված 35421 օտարման գործարքների 73.2 %-ը կազմել է առուվաճառքը,

26.2 %-ը՝ նվիրատվությունը և 0.6 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքների 33.8 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 36.3 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2015 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 16.3 %-ով: 2015 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքում անշարժ գույքի 9142 առուվաճառքի գործարքների 63.9 %-ն արձանագրվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 19.9 %-ով:

2015 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 մ² մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)	
	9 ամիս 2014թ.	9 ամիս 2015թ.
Կենտրոն	428000	428000
Արաբկիր	356600	356600
Քանաքեռ-Զեյթուն	282700	282700
Նոր-Նորք	252400	253150
Ավան	260200	260600
Էրեբունի	250700	251900
Շենգավիթ	256200	257100
Դավթաշեն	275200	275800
Աջափնյակ	249500	250000
Մալաթիա-Սեբաստիա	242100	243200
Նուբարաշեն	155500	156700
Միջինը Երևանում	<i>273600</i>	<i>274200</i>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2015 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 0.2 %-ով:

2015 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 2851 բնակարան, որոնց քանակը 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 16.5 %-ով:

2015 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները .

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)	
		9 ամիս 2014թ.	9 ամիս 2015թ.
Արագածոտն	Աշտարակ	115800	116000
	Ապարան	57400	57700
	Թալին	65600	66000
Արարատ	Արտաշատ	96100	97800
	Մասիս	115300	115800
	Վեդի	100500	101200
	Արարատ	75400	76300
Արմավիր	Վաղարշապատ	154150	154100
	Արմավիր	121200	121200
	Մեծամոր	87500	87500
Գեղարքունիք	Սևան	99200	99300
	Գավառ	59800	60100
	Մարտունի	107650	107700
	Վարդենիս	44800	44800
	Ճամբարակ	28700	28700
Լոռի	Վանաձոր	88400	88500
	Ստեփանավան	74500	74600
	Սպիտակ	99800	99800
	Ալավերդի	55000	55200
	Տաշիր	47300	47300
	Թումանյան	11000	11000
	Շամլուղ	8000	8000
	Ախթալա	20200	20400
Կոտայք	Աբովյան	155100	155100
	Նոր Հաճն	128600	128550
	Բյուրեղավան	108150	108200
	Եղվարդ	109400	109400
	Հրազդան	63800	63800
	Ծաղկաձոր	292500	292400
	Չարենցավան	85500	85500
Շիրակ	Գյումրի	109300	109200
	Արթիկ	66700	66800
	Մարալիկ	40700	40800
Սյունիք	Գորիս	122100	122900
	Կապան	92600	93800
	Սիսիան	91150	91900
	Մեղրի	80900	81800
	Ագարակ	46900	47200
	Քաջարան	94650	94600
	Դաստակերտ	8000	8000
Վայոց ձոր	Վայք	95000	95000
	Եղեգնաձոր	125300	125600
	Ջերմուկ	112800	112900
Տավուշ	Դիլիջան	113200	114000
	Իջևան	118300	118300
	Բերդ	60200	60200
	Նոյեմբերյան	49900	50000
	Այրում	31850	31850

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2015 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 0.2 %-ով:

2015 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տների 3106 առուվաճառքի գործարք, այդ թվում Երևան քաղաքում՝ 902, մարզերում՝ 2204: 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 18.2 %-ով, ընդ որում, Երևան քաղաքում՝ 10.8 %-ով, իսկ մարզերում՝ 20.9 %-ով:

2015 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ² և տնամերձի 400.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)	
	9 ամիս 2014թ.	9 ամիս 2015թ.
Կենտրոն	476100	476100
Արաբկիր	383000	383000
Քանաքեռ-Զեյթուն	295000	295000
Նորք-Մարաշ	319200	319200
Ավան	270500	270500
Էրեբունի	239600	239750
Շենգավիթ	255000	255000
Դավթաշեն	276000	276000
Աջափնյակ	250050	250050
Մալաթիա-Սեբաստիա	238000	238000
Նուբարաշեն	150700	150800
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	286700	286700

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2015 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը) 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ մնացել են անփոփոխ:

2015 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ² և տնամերձի 1000.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)	
		9 ամիս 2014թ.	9 ամիս 2015թ.
Արագածոտն	Աշտարակ	136200	136200
	Ապարան	60050	60050
	Թալին	69250	69250
Արարատ	Արտաշատ	100000	100000
	Մասիս	115100	115100
	Վեդի	102300	102300
	Արարատ	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	153100	153100
	Արմավիր	107000	107000
Գեղարքունիք	Սևան	94800	94800
	Գավառ	57100	57100
	Մարտունի	96100	96100
	Վարդենիս	41000	41000
	Ճամբարակ	31100	31100
	Վանաձոր	100000	100200
Լոռի	Ստեփանավան	90000	90400
	Սպիտակ	114000	114000
	Ալավերդի	50200	50200
	Տաշիր	51900	51900
	Թումանյան	12000	12000
	Շամլուղ	14000	14000
	Ախթալա	30000	30000
	Աբովյան	157000	157100
Կոտայք	Նոր Հաճն	129800	129800
	Բյուրեղավան	120500	120500
	Եղվարդ	116100	116100
	Հրազդան	82600	82600
	Ծաղկաձոր	305000	305000
	Չարենցավան	83000	83000
	Գյումրի	118500	118700
Շիրակ	Արթիկ	63100	63100
	Մարալիկ	52000	52000
	Գորիս	130000	130000
Սյունիք	Կապան	100000	100200
	Սիսիան	96500	96500
	Մեղրի	84500	84500
	Ագարակ	46900	46900
	Դաստակերտ	11610	11610
	Վայք	90050	90100
Վայոց ձոր	Եղեգնաձոր	116600	116600
	Ջերմուկ	131300	131300
	Դիլիջան	113000	113900
Տավուշ	Իջևան	123200	123200
	Բերդ	60100	60100
	Նոյեմբերյան	48300	48300
	Այրում	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2015 թվականի հունվար-

սեպտեմբեր ամիսներին անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը) 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ մնացել են անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, 2015 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում օտարվել է 13507 միավոր (6965.02 հա) հող, որից Երևանում՝ 857 միավոր (71.06 հա): Օտարված հողերը ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

գյուղատնտեսական նշանակության հող՝ 8246 միավոր (6468.03 հա), որից Երևանում՝ 64 միավոր (6.67 հա),

բնակելի կառուցապատման հող՝ 3490 միավոր (339.15 հա), որից Երևանում՝ 436 միավոր (36.47 հա),

հասարակական կառուցապատման հող՝ 1121 միավոր (69.56 հա), որից Երևանում՝ 333 միավոր (21.40 հա),

արդյունաբերական օբյեկտների հող՝ 138 միավոր (42.40 հա), որից Երևանում՝ 24 միավոր (6.52 հա),

առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 40 միավոր (21.93 հա),

հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 466 միավոր (21.63 հա),

ջրային հող՝ 6 միավոր (2.32 հա) ընդհանուր մակերեսով:

2015 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում օտարված հողերից 11147 միավորի (6144.75 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 687 միավոր (53.51 հա), նվիրատվության գործարք՝ 2263 միավոր (774.18 հա), որից Երևանում՝ 152 միավոր (17.11 հա) և փոխանակության գործարք՝ 97 միավոր (46.09 հա), որից Երևանում՝ 18 միավոր (0.44 հա):

Հանրապետությունում 2015 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2014թ. նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 9.1 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 27.3 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 12.1 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 17.8 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 1635.80 հա, որից 1593.17 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 21.4 %-ը կամ 2389 միավորը (1100.31 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 210 միավոր (10.36 հա), իսկ 77.8 %-ը կամ 8672 միավորը (4997.72 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 467 միավոր (43.13 հա): 2015 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել է վարձակալության իրավունքի վաճառքի 86 գործարք (46.73 հա), այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2015 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային, անտառային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող								
	Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապատ. հողեր						բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապատ. հողեր		
Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	0	0.00	6	1.79	74	5.84	130	2.72	44	2.72	15	3.46	248	20.24	160	16.70	
Արագածոտն	87	58.73	6	0.36	9	0.13	33	1.28	428	432.20	2	1.50	185	34.09	8	1.08	
Արարատ	120	169.42	17	1.38	87	4.52	63	1.17	691	495.18	5	3.91	334	30.84	32	1.11	
Արմավիր	74	496.64	6	0.79	6	0.07	15	0.63	734	1096.52	5	1.09	382	39.13	24	0.91	
Գեղարքունիք	37	13.15	4	1.19	91	8.23	67	5.50	431	247.12	6	1.16	115	14.06	17	1.33	
Լոռի	54	25.34	4	1.44	79	3.12	90	5.03	2145	1290.68	3	0.17	63	5.73	27	0.58	
Կոտայք	113	101.19	7	2.36	190	9.01	68	3.52	739	460.52	4	1.17	516	44.46	55	10.68	
Շիրակ	12	22.63	4	1.43	42	0.73	28	0.86	292	304.91	1	0.03	95	18.08	11	1.13	
Սյունիք	7	4.64	6	3.88	26	4.36	14	0.60	211	191.17	2	0.05	55	5.53	12	0.57	
Վայոց ձոր	55	84.93	1	0.04	21	2.13	9	0.10	314	170.90	2	0.11	34	3.56	11	0.45	
Տավուշ	38	17.01	12	0.95	38	2.77	71	3.09	104	29.82	2	0.10	71	6.69	18	2.27	
Ընդամենը	597	993.68	73	15.61	663	40.91	588	24.50	6133	4721.74	47	12.75	2098	222.41	375	36.81	

Ստորև ներկայացվում է 2015 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը.

	Ուղղակի վաճառք								Վաճառք աճուրդով										
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր								բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր		
Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	
Երևան	123	3.33	4	0.12	51	1.79	68	1.42	87	7.03	0	0.00	2	1.67	23	4.05	62	1.31	
Արագածոտն	9	0.055	0	0.00	1	0.00	5	8	0.05	113	58.86	74	57.14	6	0.36	8	0.12	25	1.24
Արարատ	14	0.10	1	0.05	2	0.01	11	0.04	270	154.41	117	147.43	16	1.33	85	4.51	52	1.14	
Արմավիր	11	0.26	3	0.09	3	0.05	5	0.12	86	491.09	70	489.85	3	0.70	3	0.02	10	0.52	
Գեղարքունիք	13	0.65	0	0.00	9	0.43	4	0.22	175	27.08	26	12.82	4	1.19	82	7.79	63	5.28	
Լոռի	33	1.37	0	0.00	8	0.05	25	1.32	163	30.47	23	22.25	4	1.44	71	3.07	65	3.71	
Կոտայք	56	0.672	1	0.002	52	0.63	3	0.04	320	114.35	111	100.14	6	2.35	138	8.38	65	3.48	
Շիրակ	28	0.37	0	0.00	17	0.17	11	0.20	58	25.28	12	22.63	4	1.43	25	0.56	17	0.66	
Սյունիք	14	0.19	0	0.00	13	0.10	1	0.09	37	11.28	5	2.62	6	3.88	13	4.26	13	0.52	
Վայոց ձոր	6	0.05	0	0.00	3	0.02	3	0.03	80	87.14	55	84.93	1	0.04	18	2.11	6	0.06	
Տավուշ	16	0.57	2	0.11	6	0.15	8	0.31	141	23.15	36	16.92	10	0.85	32	2.61	63	2.77	
Ընդամենը	323	7.62	11	0.37	165	3.41	147	3.84	1530	1030.14	529	956.73	62	15.24	498	37.48	441	20.69	

Հանրապետությունում 2015 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 68 գործարք (36.97 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2015 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատությամբ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 6.1 %-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 25.6 %-ով, իսկ

մարզերում՝ 4.6 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 15.5 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ նվազել է 13.8 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 16.6 %-ով, արդյունաբերական նշանակության հողերի նկատմամբ մնացել է անփոփոխ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2015 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (հա)	պայմանագրային գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (հա)	շուկայական գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	60	48.62	53.1	1400.0	517.4	262	223.94	365.0	12000.0	3729.2
Ապարան	5	0.57	147.6	1157.7	726.6	21	13.51	86.5	2727.3	652.0
Թային	4	4.11	38.1	100.0	60.0	89	128.15	93.6	5494.5	788.9
Ծաղկահովիտ	5	3.85	72.5	220.0	154.8	26	54.63	79.5	1000.0	344.5
Արարատի մարզ										
Արտաշատ	62	71.57	68.5	4065.0	1020.1	325	108.37	335.1	10833.3	2600.2
Մասիս	17	12.20	67.8	6002.2	1757.9	85	62.27	200.0	11904.8	3099.6
Վեդի	38	63.66	58.6	5031.3	1312.6	257	262.37	207.0	10795.1	1821.9
Արմավիրի մարզ										
Արմավիր	24	74.54	30.5	2362.4	526.8	326	465.02	294.3	9090.0	1230.5
Բաղրամյան	25	365.99	67.5	1217.7	385.8	112	414.04	90.6	2561.1	891.6
Վաղարշապատ	21	49.31	57.7	1681.7	640.9	274	158.64	444.4	11764.7	1948.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	3	5.78	661.5	2000.0	1113.8	203	56.71	199.8	1875.0	460.1
Ճամբարակ	1	0.12	1811.7	1811.7	1811.7	9	8.17	60.5	953.3	352.4
Մարտունի	14	2.48	130.0	2257.7	375.9	73	9.89	51.1	2850.0	802.2
Սևան	6	3.43	172.5	1221.0	706.2	65	22.09	52.2	2134.8	341.2
Վարդենիս	2	1.02	354.8	555.5	455.2	77	149.68	41.2	2575.1	425.2
Լոռու մարզ										
Ալավերդի	7	1.67	167.1	16435.6	4788.2	429	111.30	170.4	6424.2	598.2
Գուգարք	8	0.82	238.0	1380.9	955.4	103	31.59	234.6	6065.9	790.7
Սպիտակ						29	9.95	250.0	5555.5	698.1
Ստեփանավան	4	16.71	290.5	1274.3	857.6	40	31.79	90.6	1686.6	385.4
Տաշիր	4	3.05	167.8	1487.9	588.5	1534	1095.45	45.3	1384.4	180.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	30	13.44	97.4	6887.9	2476.6	253	159.97	279.3	11942.7	4007.1
Եղվարդ	60	72.94	36.6	32341.9	922.8	353	208.56	174.4	11971.8	2425.1
Հրազդան	21	13.76	85.5	1191.0	526.8	117	59.95	130.5	10256.4	1159.5
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	0.94	115.5	115.5	115.5	103	88.92	252.0	1693.1	624.5
Ամասիա	1	3.00	151.8	151.8	151.8	14	34.31	40.9	261.0	131.4
Անի	4	8.87	78.4	117.5	103.2	83	88.40	110.6	546.9	453.1
Աշոցք						18	28.97	58.5	215.8	137.4
Արթիկ	6	9.82	209.0	660.0	320.6	71	58.74	79.4	1428.6	496.1
Սյունիքի մարզ										
Գորիս						35	36.95	92.6	1023.2	789.6
Կապան						24	36.48	120.0	841.6	399.4
Մեղրի	3	1.48	360.5	714.3	496.4	17	10.97	193.0	3000.0	752.2
Սիսիան	2	1.14	150.0	159.5	154.7	134	105.28	46.3	1977.4	595.9
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	20	25.72	21.7	755.7	139.1	62	40.01	125.0	10000.0	1840.2
Վայք	35	59.22	44.7	13239.1	1270.9	252	130.89	58.8	1430.7	605.1

Տավուշի մարզ										
Բերր	1	0.70	235.7	235.7	235.7	36	5.76	213.3	3783.8	675.0
Իջևան	26	13.21	140.7	3300.0	785.2	34	7.28	267.5	9454.5	1388.4
Նոյեմբերյան	9	3.00	166.8	2922.7	1024.6	33	16.32	46.7	7368.4	975.6

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2015 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 մ² մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (մ ²)	պայմանագրային գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (մ ²)	շուկայական գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	6	800.1	4353.2	5897.1	4999.8	134	121923.4	130.7	22200.0	2586.4
Ապարան	2	412.5	273.8	5622.2	2948.0	10	12060.0	124.1	609.6	390.4
Թային						10	13762.0	63.2	1454.8	152.5
Ծաղկահովիտ						1	1628.0	60.0	214.3	93.0
Արարատի մարզ										
Արտաշատ	21	17027.5	346.2	5547.8	1501.4	97	114142.3	173.9	7140.3	905.0
Մասիս	57	24994.4	869.8	5082.9	2770.1	158	119214.5	187.5	25000.0	1210.3
Վեդի	7	3066.2	356.3	2500.0	1631.0	74	70307.2	126.1	5000.0	663.8
Արմավիրի մարզ										
Արմավիր	3	183.0	359.1	2940.0	1540.4	137	150898.6	131.6	9090.9	1214.4
Բաղրամյան						7	6450.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ						228	222083.6	197.4	26528.4	1531.1
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	23	29976.6	172.6	272.1	229.3	22	27247.3	186.6	1084.3	683.9
Ճամբարակ	3	122.5	312.5	384.8	360.0	7	9033.0	71.3	2286.2	147.2
Մարտունի	31	34128.0	165.0	833.3	304.2	61	72841.6	119.3	5000.0	281.7
Սևան	2	72.0	2200.0	2300.0	2250.0	9	9346.5	240.0	3110.4	333.4
Վարդենիս	23	13611.9	66.0	600.0	289.1	15	21013.9	72.5	987.2	150.2
Լոռու մարզ										
Ալավերդի	42	16217.4	233.7	2700.0	1330.6	16	17826.8	114.3	1388.9	217.2
Գուգարք	18	5037.6	105.8	2489.5	1780.2	23	17940.3	77.9	14083.3	1260.4
Սպիտակ	9	9184.2	145.3	245.0	207.0	9	8470.0	104.9	1348.3	206.7
Ստեփանավան						9	10125.0	88.2	1666.7	175.7
Տաշիր	2	214.7	297.0	300.0	298.3	3	1771.0	45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	105	66981.9	301.2	5647.9	3070.2	299	248372.9	264.5	35353.5	1986.7
Եղվարդ	29	15428.5	204.7	5041.5	2657.6	176	161170.7	173.6	27000.0	2863.0
Հրազդան	4	1350.8	243.1	3234.0	1482.4	35	28271.9	117.7	34848.5	1318.5
Շիրակի մարզ										
Ախուրյան	13	3431.0	174.2	10482.5	4802.0	49	122101.1	113.6	18750.0	335.4
Ամասիա								45.3	274.7	72.0
Անի	3	1610.7	244.2	376.8	303.0	7	9605.3	67.9	180.6	195.3
Աշոցք						2	12310.0	40.8	144.0	65.0
Արթիկ	9	555.0	300.0	5500.0	2819.7	35	36651.7	111.8	5000.0	218.6
Սյունիքի մարզ										
Գորիս	1	835.0	744.9	744.9	744.9	19	17415.0	112.2	1700.0	365.6
Կապան	9	40427.7	115.2	2700.0	1217.6	7	10893.0	67.9	2638.9	343.4
Մեղրի	2	954.0	305.9	1081.8	693.9	17	12880.9	68.5	632.9	248.2
Սիսիան	1	378.0	607.2	607.2	607.2	11	13032.0	123.5	875.0	235.0

Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	15	19200.0	56.7	1038.8	546.1	23	26429.9	96.7	7659.6	509.1
Վայք	3	1912.0	851.6	1325.2	1203.7	6	6759.0	120.7	1448.3	246.4
Տավուշի մարզ										
Բերդ	1	583.3	550.3	550.3	550.3	5	6268.2	75.8	810.0	125.3
Իջևան	26	23216.0	52.3	3000.0	1813.3	56	49310.3	74.1	14423.1	528.0
Նոյեմբերյան	5	2345.0	100.8	900.0	324.7	9	10039.9	125.0	1948.1	246.2

2015 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 5173 վարձակալության գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.0 %-ը: Ընդ որում, վարձակալության գործարքի 74.1 %-ն իրականացվել է իրավաբանական անձանց կողմից: 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքի քանակը նվազել է 15.3 %-ով:

2015 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 417 բնակարանի, 419 անհատական բնակելի տան, 2430 հասարակական, 514 արտադրական նշանակության օբյեկտի, 1284 միավոր հողի, 104 ավտոտնակի և 5 այգետնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2015 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքում հողերի նկատմամբ գրանցված 55 վարձակալության գործարքի քանակը 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 7.8 %-ով:

2015 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում վարձակալված 25647.33 հա հողերից 5.19 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 25642.14 հա հողերի 3259.73 հա գյուղատնտեսական նշանակության, 50.58 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 947.04 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Շիրակի մարզում՝ 21442.67 հա, որից 257.06 հա գյուղատնտեսական նշանակության:

2015 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 11958 գրավադրման գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 9.2 %-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 35.3 %-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (51.2 %), առանձնատների (22.3 %). հասարակական նշանակության օբյեկտների (11.0 %) և հողերի (9.6 %) նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 6770 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2014 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների համեմատ նվազել է 33.9 %-ով:

2015 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում գրավադրվել է 4516.48 հա մակերեսով հող, որից 87.00 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 55.0 %-ը կամ 2486.06 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 1.73 հա: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Սյունիքի մարզում՝ 1880.97 հա, որից 1.00 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

2015 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 1014 գործարք, որից 719-ը՝ Երևանում: 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, հիփոթեքային գրավադրման

գործարքների քանակը նվազել է 30.3 %-ով, ընդ որում, Երևան քաղաքում՝ 24.7 %-ով, իսկ մարզերում՝ 40.9 %-ով:

2015 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին, հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 15510 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որոնց քանակը 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 5.7 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 11.9 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում(24.2 %):

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե